

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
ապրիլի 16-ի N 411 - Ն որոշման

2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի կառավարման ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվում է ծրագրի գործողության ժամանակահատվածում պետական գույքի առանձին խմբերի համար իրականացվելիք միջոցառումների և գործարքների, զարգացման առաջնահերթությունների ու սահմանափակումների նկարագրությունը սահմանելու նպատակով՝ ապահովելով Հայաստանի Հանրապետությունում այս ոլորտում իրականացվող քաղաքականության միասնականությունն ու շարունակականությունը:

2. Ծրագիրը գործում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում: Յուրաքանչյուր տարի, մինչև տվյալ տարվա մարտի 15-ը, ծրագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ ընթացիկ և հաջորդ տարվա համար նախատեսված միջոցառումների և գործարքների նկարագրությունը սահմանելու համար:

3. Ծրագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության, հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների, մարզպետների ներկայացմամբ:

II. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Սույն ծրագրի գործողությունը տարածվում է՝

1) պետական կառավարչական և պետական այլ հիմնարկներին ամրացված գույքի.

2) պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված անշարժ գույքի.

3) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետությանը պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասերի).

4) սեփականության իրավունքով պետությանը պատկանող ոչ նյութական ակտիվների, այդ թվում՝ մտավոր սեփականության օբյեկտների և դրանց նկատմամբ իրավունքների.

5) պետությանը պատկանող գույքային իրավունքների (բացառությամբ պետությանը պատկանող պահանջի իրավունքի).

6) ինչպես նաև՝ այն գույքի վրա, որի նկատմամբ դատական ակտով ճանաչվել է պետության սեփականության իրավունքը:

5. Սույն ծրագրի գործողությունը չի տարածվում՝

1) պետական սեփականություն հանդիսացող հողամասերի (բացառությամբ շենք, շինություններով զբաղեցված և դրա սպասարկման համար հատկացված հողամասերի), ընդերքի, անտառների, մեկուսի ջրային օբյեկտների և պետությանը պատկանող այլ բնական պաշարների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գույքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հիմնադրված կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասնակցությամբ կազմակերպությունների վրա.

2) պաշտպանական, սահմանային, քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի

տիրապետմանը և օգտագործմանը հանձնված պետական գույքի վրա, որն իր նշանակությամբ նախատեսված է գաղտնի աշխատանքների կատարման համար.

3) պետության նկատմամբ պարտքի դիմաց որպես սեփականություն ընդունված գույքի վրա.

4) «Սեփականության իրավունքից հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ռեժիմով պետությանը սեփականության իրավունքով հանձնված գույքի վրա.

5) մասնավոր կառավարման հանձնված ընկերությունների վրա:

6. Առևտրային կազմակերպություններում մինչև 50 տոկոս բաժնետոմսերը (բաժնեմասերը) պետական սեփականություն հանդիսանալու դեպքում այդպիսի կազմակերպություններում իրականացվող միջոցառումների վերաբերյալ որոշումներն ընդունվում են համապատասխան կազմակերպական-իրավական տեսակի առևտրային կազմակերպության գործունեությունը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

7. Ծրագրի նպատակներն են՝

1) պետական գույքի կառավարման միասնական քաղաքականության վարումը.

2) պետական գույքի արդյունավետ կառավարման արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ավելացումը.

3) պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր (բաժնեմասեր) ունեցող իրավաբանական անձանց մրցունակության բարձրացումը, դրանց գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների բարելավումը.

4) պետական գույքի կազմի ու կառուցվածքի կանոնակարգումը և օպտիմալացումը.

5) պետական գույքի ապապետականացման (այդ թվում՝ մասնավորեցման) միասնական քաղաքականության իրականացումը.

6) պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների լուծարման գործընթացի կանոնակարգումը.

7) պետական գույքի հաշվառման համակարգի կատարելագործումը.

8) պետական ակտիվների օգտագործումը՝ տնտեսության իրական հատվածում ներդրումներ ներգրավելու համար:

8. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

1) պետական գույքի ամբողջական հաշվառման իրագործում, դասակարգում, հաշվառման գրանցամատյանների վարում, սահմանված կարգով սեփականության իրավունքների պետական գրանցման ապահովում.

2) պետության գույքային իրավունքների և շահերի համակարգված ամբողջական իրացում.

3) պետական գույքի պահպանման և օգտագործման գործընթացի (վարձակալություն, լիզինգ, հավատարմագրային կառավարում և այլն) կանոնակարգում և վերահսկում.

4) պետական գույքի օտարման և մասնավորեցման գործընթացների կանոնակարգում և վերահսկում.

5) բաժնետիրական ընկերություններում պետության լիազոր ներկայացուցչական համակարգի կազմակերպում և վերահսկում.

6) պետական ու պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների լուծարման և դրանց գույքի տնօրինման, ինչպես նաև սնանկացման ու ֆինանսական առողջացման ծրագրերի հիմնավորում և իրականացում.

7) պետական գույքի տարանջատում՝ ըստ հետևյալ կառուցվածքային խմբերի՝

ա. առաջնային նշանակության գույք, որի միջոցով իրագործվում են պետության
ռազմավարական, սահմանադրական և օրենսդրական գործառնությունները,

բ. առևտրային նշանակության գույք:

III. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Սույն ծրագրի իրականացման հիմքում դրված են պետական գույքի
կառավարման հետևյալ սկզբունքները՝

1) պետական գույքի՝ կառավարման յուրաքանչյուր օբյեկտի (օբյեկտների խմբի)
կառավարման նպատակի (նպատակների) սահմանում և ամրագրում.

2) սահմանված նպատակին հասնելու եղանակի ընտրություն, որը կարող է
որոշվել նաև կառավարիչների ընտրության և նշանակման ընթացակարգի շրջանակ-
ներում և հաստատվել պետական լիազորված մարմնի կողմից.

3) կառավարման համակարգի ձևավորում, որի գործունեությունն ու պետական
մարմինների հետ փոխհարաբերությունները կանոնակարգվում են համապատասխան
իրավական ակտերով.

4) կառավարման արդյունավետության ապահովում, որը պարտադիր է
պետական մարմինների գործունեության և կառավարիչների կողմից պետական
սեփականության կառավարման աշխատանքների գնահատման ժամանակ.

5) պետական գույքի կառավարման տարբեր մակարդակներում կառավարիչ-
ների (գործադիր տնօրեն, պետության լիազոր ներկայացուցիչ, հավատարմագրային
կառավարիչ) աշխատանքների վերահսկողության և գնահատման համակարգի հստակ
սահմանում.

6) կառավարման ոլորտում մասնակիցների շահերի ներդաշնակության ապա-
հովում.

7) պետական առևտրային կազմակերպություններում միջազգային լավագույն փորձի վրա հիմնված (մասնավորապես՝ տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության երկրների) կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառման մեխանիզմների ներդրում.

8) պետական-մասնավոր համագործակցության պարզեցված սկզբունքների ներդրում, մասնավորապես, պետական գույքի արժեթղթավորման և ցուցակման միջոցով:

10. Պետական գույքի կառավարման ընդհանուր գերակայություններն են՝

1) գույքի օգտագործման արդյունավետության ապահովումը.

2) գույքի արժեքի և որակական հատկանիշների պահպանումը.

3) առաջնային նշանակության գերակայությունը. եթե միևնույն գույքն ունի երկակի նշանակություն, այն դասվում է առաջնային նշանակության գույքի խմբին.

4) առաջնային նշանակության գույքը կարող է համարվել ի հաշիվ առևտրային նշանակության գույքի՝ դրանց ուղղակի փոխանցման կամ, եթե դրանք իրենց նշանակությամբ կամ բնութագրերով չեն համապատասխանում առաջադրված խնդիրներին, դրանց մասնավորեցումից (օտարումից) ստացված միջոցներով ձեռք բերված գույքի.

5) առաջնային նշանակության գույքը հիմնականում ենթակա չէ մասնավորեցման.

6) պետական գույքի նշանակությունը ենթակա է պարբերական վերանայման (օրինակ, յուրաքանչյուր տարի կամ յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ).

7) պետական գույքի համարման նախապատվելի եղանակը պետական գնումներն են, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված բացառիկ դեպքերում գույքի ձեռքբերումը՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:

11. Պետական գույքի կառավարման հատուկ գերակայություններն են՝ կախված գույքի նշանակությունից՝

1) առաջնային նշանակության պետական գույքի կառավարման համար՝

ա. պետության սահմանադրական և օրենսդրական գործառույթների, վարչական և ռազմավարական նպատակների կատարման համար անհրաժեշտ գույքի նկատմամբ հիմնական պահանջներին նրանց լիակատար համապատասխանությունը,

բ. այս պահանջները բավարարող տարբերակներից առավել մատչելի և ռեսուրսախնայողի ընտրությունը.

2) առևտրային նշանակության պետական գույքի կառավարման համար՝ օգտագործման այլընտրանքային տարբերակներից նախապատվությունը տրվում է այն տարբերակներին, որոնք առավել նպաստում են տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության խթանմանը, արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, մարդկային կապիտալի զարգացմանը, պետության այլ գործառույթների կատարմանը:

IV. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

12. Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների կառավարման համակարգի կատարելագործման, դրանց կողմից պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) հստակեցնել պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային

կազմակերպությունների կազմն ու կառուցվածքը և օպտիմալացնել դրանց քանակը, մասնավորապես՝

ա. լուծարել «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ մասնավորեցման ծրագիր) չընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունները՝ համաձայն N 1 ցանկի,

բ. վերակազմակերպել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունները՝ համաձայն N 2 ցանկի.

2) կատարելագործել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական մոնիթորինգի համակարգը և բարձրացնել պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման որակը, մասնավորապես՝

ա. սահմանել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների աշխատանքի հիմնական տեխնիկատնտեսական և այլ որակական ցուցանիշները, այդ թվում՝ դրանց գործարար ծրագրերի (ֆինանսատնտեսական գործունեության ծրագրերի) համաձայնեցման միջոցով,

բ. սահմանել հսկողություն պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար սահմանված ծրագրերի իրականացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ,

գ. իրականացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների և պետական ոչ առևտրային

կազմակերպությունների ժամկետանց կրեդիտորական պարտավորությունների մոնիթորինգ, պարտավորությունների առաջացման գործոնների վերլուծություն,

դ. մշակել և իրականացնել վնասով ու ցածր շահութաբերությամբ աշխատող՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական առողջացման ծրագրեր՝ դրանց սնանկացումը թույլ չտալու համար,

ե. իրականացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվետվությունների ստուգում,

զ. իրականացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության վերահսկում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան,

է. սեփականատիրոջ նախաձեռնությամբ իրականացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության աուդիտ.

3) ներդնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի (բաժնեմասերի) կառավարման առաջավոր մեթոդներն ու ձևերը, մասնավորապես՝

ա. կազմակերպել ուսուցում (ներառյալ օրենսդրության, կառավարման մեթոդների իրազեկում) և որակավորման բարձրացման դասընթացներ՝ պետական գույքի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց (գործադիր տնօրեններ, կառավարիչներ, պետության լիազոր ներկայացուցիչներ) համար,

բ. սահմանել պետական գույքի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց (գործադիր տնօրեններ, կառավարիչներ, պետության լիազոր ներկայացու-

ցիչներ) աշխատանքի խրախուսման ձևերն ու մեխանիզմները, որոնք պետք է կախված լինեն նրանց գործունեության արդյունքներից.

4) բարձրացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գույքի օգտագործման արդյունավետությունը, մասնավորապես՝

ա. սահմանել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների կողմից գույքի (անշարժ և շարժական) և պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից անշարժ գույքի օգտագործման արդյունավետության գնահատման չափորոշիչները,

բ. իրականացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների կողմից գույքի (անշարժ և շարժական) և պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից անշարժ գույքի օգտագործման արդյունավետության պարբերաբար ուսումնասիրություններ,

գ. կիրառել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպություններին և պետական ոչ առևտրային կազմակերպություններին վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մեխանիզմները:

13. Պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ցուցանիշների բարելավման, ինչպես նաև ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ մասնավորեցնել առևտրային կազմակերպությունների բաժնետոմսերը և այլ գույքը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող մասնավորեցման օրենսդրությանը և մասնավորեցման ծրագրին համապատասխան.

14. Ապահովել պետության շահերն առևտրային կազմակերպությունների կողմից շահույթի բաշխման վերաբերյալ որոշումների ընդունման ժամանակ, մասնավորապես՝

1) ապահովել N 3 ցանկում ընդգրկված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ենթակայության առևտրային կազմակերպությունների շահութաբաժիններ վճարելու վերաբերյալ որոշումների ընդունումը.

2) կատարելագործել առևտրային կազմակերպություններում պետության լիազոր ներկայացուցիչների գործունեության նկատմամբ հսկողությունը:

15. Պետական գույքի առանձին օբյեկտների օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) առևտրային շրջանառության մեջ ներգրավել պետությանը պատկանող՝ չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող, կամ մասնակիորեն օգտագործվող անշարժ գույքի օբյեկտները, մասնավորապես՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմին հանձնել չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող պետական գույքը՝ համաձայն N 4 ցանկի,

բ. օպտիմալացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնենասերով) առևտրային կազմակերպությունների գույքի կազմը՝ դրա վերաբերյալ որոշում ընդունելու իրավասություն ունեցող ղեկավար մարմնի (անձանց) որոշումների հիման վրա.

2) իրականացնել պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից շարժական գույքի օգտագործման վերահսկողության մեխանիզմը:

16. Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասին տեղեկությունների մատչելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) կատարելագործել պետական գույքի հաշվառման համակարգը, մասնավորապես՝

ա. լրամշակել և հստակեցնել պետական գույքի կազմի մասին առկա տեղեկությունները,

բ. ներդնել պետական գույքի հաշվառման ամբողջական, ավտոմատացված համակարգ, որը հասանելի է պետական գույքի կառավարման գործընթացում ընդգրկված բոլոր պետական մարմինների համար,

գ. մշակել պետական գույքի տարրերի մասին տեղեկությունների տրամադրման կարգ,

դ. իրականացնել պետական անշարժ գույքի և պետական գրանցման ենթակա՝ պետությանը պատկանող իրավունքների տեխնիկական գույքագրում:

V. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՕՏԱՐՈՒՄԸ

17. Մասնավորեցման ծրագրում ընդգրկված և մինչև սույն ծրագիրն ուժի մեջ մտնելը չմասնավորեցված (չլուծարված) առևտրային կազմակերպությունների և այլ օբյեկտների մասնավորեցման և (կամ) լուծարման առաջարկելու ժամկետները սահմանվում են սույն ծրագրով՝ համաձայն N 5 ցանկի:

18. N 5 ցանկում ընդգրկված առևտրային կազմակերպությունները և այլ օբյեկտները մասնավորեցվում ու լուծարվում են՝ մասնավորեցման ոլորտում գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

19. Մասնավորեցման ծրագրում չընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի և անշարժ գույքի, որի՝ պետությանը պատկանող գույքային իրավունքներն

առաջարկվում է փոխանցել իրավաբանական ու ֆիզիկական անձանց, կազմը սահմանվում է համաձայն N 6 ցանկի:

VI. ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

20. Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմիններն իրավունք չունեն ծրագիրն ուժի մեջ մտնելուց հետո դրանում ընդգրկված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների և պետական այլ գույքի նկատմամբ իրականացնելու այնպիսի գործառնություններ, որոնց արդյունքում անհնար կդառնա պետական գույքի նկատմամբ՝ սույն ծրագրով սահմանված միջոցառումների իրականացումը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմինները պարտավոր են սույն ծրագրում ընդգրկված ընկերություններին թույլ չտալ իրականացնել ոչ համարժեք կամ զեղչ գներով խոշոր գործարքներ, ընկերության գործունեության հետ չկապված ծախսեր (գործարքներ), մասնավորապես, բաժնետիրոջ լիազորություններ իրականացնող պետական կառավարման մարմնի աշխատողների գործուղման, բարեգործական, ընկերության հիմնական գործունեությանը չառնչվող՝ սոցիալական ուղղվածություն ունեցող և այլ անհատույց գործարքներ:

21. Ծրագրում ընդգրկված պետական գույքի նկատմամբ այլ սահմանափակումներ կարող են սահմանվել սույն ծրագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով:

VII. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

22. 50 տոկոս և ավելի պետական սեփականությամբ բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների գործունեությանն առնչվող՝ սույն ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության անունից այդ կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինները:

23. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը:

24. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման և միջոցառումների իրականացման աստիճանը որոշելու նպատակով ծրագրի կատարման մասին մշակվում է տարեկան հաշվետվություն, որը Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացվում մինչև հաջորդող տարվա մայիսի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ց Ա Ն Կ N1

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐՈՎ)
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	ՊՈԱԿ-ի կամ առևտրային կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Հանրապետական գործադիր մարմնի անվանումը	Լուծարման վերաբերյալ առաջարկության հիմնավորումը
1.	«ՀՊ-ինֆո» ինֆորմատիկայի կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Կառավարական 3-րդ շենք	ՀՀ մշակույթի նախարարություն	Վերջին յոթ տարիների ընթացքում գործունեություն չի ծավալել:
2.	«Մարտունու գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Մարտունի Ջիրոյան 35	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	ՊՓԲԸ-ները չեն իրականացնում իրենց վերապահված գործառույթները:
3.	«Մխչյանի գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Մխչյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	
4.	«Նոր նորք ուսանողական ավան» ՓԲԸ	քաղ. Երևան, Մոլդովական 12	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	

Ց Ա Ն Կ N2

ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ
(ԲԱԺՆԵՄԱՍԵՐՈՎ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Առևտրային կազմակեր- պության անվանումը	Գտնվելու վայրը	Պետական բաժնեմասի մեծությունը (%)	Հանրապետական գործադիր մարմնի անվանումը	Վերակազմա- կերպման առաջարկվող մոտեցումը	Վերակազմա- կերպման նպատակը
1.	«Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ	քաղ. Երևան, Ֆուչիկի 27	98.4	ՀՀ պաշտպանության նախարարություն	«65 ռազմական գործարան» ՓԲ և «Գառնի Լեռ» ԳԱՄ ԲԲ ընկերությունները միաձուլման ձևով վերակազմակեր- պել «Նաիրի մեխանիկական գործարան» ԲԲԸ-ի	«Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ-ն հիմնականում իրականացնում է հատուկ պատվերները, իսկ «65 ռազմական գործարան» ՓԲԸ-ն ունի մեծ տարածքներ և հզորություններ: Առաջարկվում է ընկերությունները միաձուլման ձևով վերակազմակերպել «Նաիրի մեխանիկական գործարան» ԲԲԸ-ի:

Ց Ա Ն Կ Ն 3

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ

NN ը/կ	Առևտրային կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Հանրապետական գործադիր մարմնի անվանումները	2014թ. ՀՀ պետական բյուջե առևտրային կազմակերպությունների «Բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենդներ» գանձապետական հաշիվներին փաստացի փոխանցած շահութաբաժինների մեծությունը	2015-2017թթ. ՀՀ պետական բյուջե շահութաբաժինների գծով վճարման ենթակա գումարների կանխատեսումները (հազ. դրամ)		
					2015	2016	2017
1	2	3	4	5	6	7	8
1.	«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ	քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառա- վարական տուն 1	ՀՀ կառավարության աշխատակազմ	0	8 750.0	9 200.0	9 200.0
2.	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ	քաղ. Երևան, Միեր Մկրտչյան 5	ՀՀ կառավարության աշխատակազմ	0	0	0	0
3.	«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ	քաղ. Երևան, Տիգրան Մեծի 4	ՀՀ արդարադատության նախարարություն	2 371 .0	2 000.0	2 000.0	2 000.0
4.	«Էկոնոմիկա» հանդես» ՓԲԸ	քաղ. Երևան, Արշակունյաց 2ա	ՀՀ ֆինանսների նախարարություն	0	0	0	0
5.	«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	քաղ. Երևան, Կոմիտասի 49/4	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	15 410.0	7 400.0	7 500.0	7 500.0
6.	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ	քաղ.Երևան, Կոմիտասի 49/4	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	1 500.0	5 100.0	5 250.0	5 250.0
7.	«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ	քաղ.Երևան, Արշակունյաց 12	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	0	0	0	0
8.	«Կոմետա» ԲԲԸ	քաղ. Երևան, Արևյան 6	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	0	200.0	200.0	200.0
9.	«Հուշարձանների վերականգնման կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Թաիրովի 9	ՀՀ մշակույթի նախարարություն	500	1 500.0	1 500.0	1 500.0
10.	«Հայսեյսմձին և ԿՊ ԳՀԻ» ՓԲԸ	քաղ.Երևան, Ա.Ահարոնյան 3	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	780.0	1 140.0	1 040.0	1 040.0
11.	«Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	քաղ. Երևան, Մյասնիկյան 5/1	ՀՀ էներգետիկայի և քնական պաշարների նախարարություն	6 500.0	6 500.0	6 500.0	6 500.0

1	2	3	4	5	6	7	8
12.	«Հայատոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Ծովակալ Իսակովի 50	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	6 070.0	6 200.0	6 300.0	6 400.0
13.	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Աբովյան 27	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	1 682.0	1 700.0	1 700.0	1 700.0
14.	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	քաղ. Երևան, Աբովյան 27	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	5 292.0	3 150.0	3 150.0	3 150.0
15.	«Էներգակարգաբերում» ՓԲԸ	քաղ. Երևան, Այգեձորի 67	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	1 702.5	1 500.0	1 500.0	1 500.0
16.	«Անալիտիկ» ՓԲԸ	քաղ. Երևան, Կոմիտասի 29	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	4 612.0	2 285.0	2 285.0	2 285.0
17.	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Տիգրան Մեծի 4	ՀՀ կառավարության առընթեր միջուկային կարգավորման պետական կոմիտե	3 230.5	2 150.0	2 150.0	2 150.0
18.	«Հանրապետական հոգեբու- ժական կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Նուբարաշեն 1/3	ՀՀ առողջապահության նախարարություն	0	7500.0	7500.0	7500.0
19.	«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Նորք-Մարաշ, 9-րդ փող., 123	ՀՀ առողջապահության նախարարություն	0	4557.5	4557.5	4557.5
20.	«Հանրապետական հակատուրբերկույրոգային դիսպանսեր» ՓԲԸ	քաղ. Աբովյան, Արզնի խճուղի, 10	ՀՀ առողջապահության նախարարություն	0	2500.0	2500.0	2500.0
21.	«Վ. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Ֆանարջյան 76	ՀՀ առողջապահության նախարարություն	11 182.0	19 600.0	20 000.0	20 000.0
22.	«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձա- գիտական կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Կոմիտասի 49/4	ՀՀ առողջապահության նախարարություն	43 894.4	28 400.0	30 500.0	30 500.0
23.	«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Գյուրջյան 10	ՀՀ առողջապահության նախարարություն	5 365.5	37 500.0	40 000.0	40 000.0
24.	«Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Դավթաշեն 25	ՀՀ առողջապահության նախարարություն	1 370.5	2 750.0	3000.0	3000.0

1	2	3	4	5	6	7	8
25.	«Հանրապետական անձավարու- ժական կենտրոն» ՓԲԸ	քաղ.Երևան, Աճառյան 2-րդ կրթանցք, 4	ՀՀ առողջապահության նախարարություն	0	500.0	500.0	500.0
26.	«Նորք» ինֆեկցիոն կլինի- կական հիվանդանոց» ՓԲԸ	քաղ.Երևան, Արմենակյան 153	ՀՀ առողջապահության նախարարություն	20 164.0	6 510.0	7 160.0	7 160.0
27.	«Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ	քաղ.Երևան, Ֆուչիկի 32	ՀՀ առողջապահության նախարարություն	2 828.0	2 000.0	2 250.0	2 250.0
28.	«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ	քաղ. Սևան	ՀՀ առողջապահության նախարարություն	3 519.0	4 460.0	4 625.0	4 625.0
29.	«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվ. Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	քաղ.Երևան, Կոմիտասի 49/4	ՀՀ առողջապահության նախարարություն	6 501.0	3 145.0	4 136.0	4 136.0
30.	«Պրոֆ. Ռ.Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ	քաղ.Երևան, Հրաչյա Ներսիսյան 7	ՀՀ առողջապահության նախարարություն	17 899.5	6 650.0	7 000.0	7 000.0
31.	«Ակուստիկայի գիտական կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Բագրատունյաց 2-րդ կրք., 23	ՀՀ առողջապահության նախարարություն	0	0	0	0
32.	«Օշական մանկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ	Արագածոտնի մարզ, գ.Օշական	ՀՀ առողջապահության նախարարություն	0	0	0	0
33.	«Հատուկ պոլիկլինիկա» ՓԲԸ	քաղ. Երևան, Կոմիտասի 49/4	ՀՀ առողջապահության նախարարություն	1 996.136	2 730.0	2 730.0	2 730.0
34.	«Առողջապահության հանդեսի խմբագրություն» ՓԲԸ	քաղ. Երևան, Թումանյան 8, Հայաբլան 46	ՀՀ առողջապահության նախարարություն	41.0	0	0	0
35.	«Երևանի երկաթուղու պոլիկլինիկա» ՓԲԸ	քաղ.Երևան, Արցախի 8բ	ՀՀ առողջապահության նախարարություն	0	0	0	0
36.	«Դիլիջան» մանկական հակատուբերկուլյոզային առողջարան» ՓԲԸ	քաղ. Դիլիջան , Օրջոնիկիձեի 5-րդ կրք., տուն 1	ՀՀ առողջապահության նախարարություն	0	0	0	0
37.	«Ռադիոլոգոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ	քաղ.Երևան, Միեր Մկրտչյան 5	ՀՀ առողջապահության նախարարություն	0	0	0	0

1	2	3	4	5	6	7	8
38.	«Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	քաղ. Երևան, Տիգրան Մեծի 67	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	49 946.600	4 000.0	4 000.0	4 000.0
39.	«Կրթություն» թերթի խմբագրություն» ՊՓԲԸ	քաղ. Երևան, Տիգրան Մեծի 67	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	778.655	300.0	325.0	325.0
40.	«Գեղագիտության ազգային կենտրոն» ՊՓԲԸ	քաղ. Երևան, Արուսյան 13	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	5 043.750	200.0	200.0	200.0
41.	«Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» կրթահամալիր» ՓԲԸ	քաղ.Երևան, Նոր Նորքի 5	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	0	150.0	200.0	250.0
42.	«Երևանի պլաստպոլիմեր ԳՀԻ» ՓԲԸ	քաղ.Երևան, Արշակունյաց 127	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	0	0	0	0
43.	«Արագածոտնի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ	ՀՀ Արագածոտնի մարզ, քաղ. Աշտարակ, Վարդգես Պետրոսյան 4	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	160.5	355.0	400.0	420.0
44.	«Արարատի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ	ՀՀ Արարատի մարզ, քաղ. Արարատ. Շահումյան 34	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	77.0	96.0	112.0	128.0
45.	«Արմավիրի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ	ՀՀ Արմավիրի մարզ, քաղ. Արմավիր, Արուսյան 71	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	129.5	260.0	280.0	300.0
46.	«Գեղարքունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Սայաթյան 13	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	144.0	500.0	580.0	700.0
47.	«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Մամիկոնյանց 39 ա	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	43.0	45.0	50.0	100.0
48.	«Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ	ՀՀ Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Սելեկցիոն կայան 31Է	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	14 667.3	19 600.0	19 800.0	20 000.0
49.	«Կոտայքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ	ՀՀ Կոտայքի մարզ, Արուսյանի տ/2 գ. Նոր գյուղ, 1-ին փող., 4	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	197.2	160.0	180.0	200.0

1	2	3	4	5	6	7	8
50.	«Լոռու գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Սպիտակ, Շահումյան 7	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	96.5	158.0	165.0	170.0
51.	«Մյուսյանի գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Մյուսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	49.9	60.0	80.0	85.0
52.	«Շիրակի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ	ՀՀ Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Գյումրու խճուղի, 42	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	86.68	130.0	140.0	140.0
53.	«Սյունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ	ՀՀ Սյունիքի մարզ, քաղ. Գորիս, Մաշտոցի 3	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	128.25	150.0	175.0	200.0
54.	«Վայոց ձորի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ	ՀՀ Վայոց ձորի մարզ, քաղ. Եղեգնաձոր, Շահումյան 5	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	114.5	150.0	200.0	230.0
55.	«Տավուշի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ	ՀՀ Տավուշի մարզ, քաղ. Իջևան, Մելիքբեկյան 5/12	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	181.0	210.0	224.0	230.0
56.	«Ազդոսպասարկում» ՓԲԸ	քաղ. Երևան, Տիգրան Մեծի 65 ա	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	0	4 800.0	4 200.0	4 000.0
57.	«Հայջրնուդկոյուղի» ՓԲԸ	քաղ. Երևան, Վարդանանց փակուղի, 8Ա	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	0	0	0	0
58.	«Սևան-Հրազդան-ջրառ» ՓԲԸ	քաղ.Երևան, Արմենակյան 125	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	0	0	0	0
59.	«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ	քաղ.Արմավիր, Երևանյան 30	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	0	0	0	0
60.	«Մելիորացիա» ՓԲԸ	Արարատի մարզ, գ. Հայանիստ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	0	0	0	0
61.	«Նոր-Ակունք» ՓԲԸ	քաղ. Արմավիր, Մաշտոցի 59	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	0	0	0	0
62.	«Շիրակ-ջրնուդկոյուղի» ՓԲԸ	քաղ. Գյումրի, Դոդկոյի 1	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	0	0	0	0
63.	«Լոռի-ջրնուդկոյուղի» ՓԲԸ	քաղ. Վանաձոր, Ն. Ստեփանյան 2	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	0	0	0	0

1	2	3	4	5	6	7	8
64.	«Զվարթնոց» ԱՕԿ ՓԲԸ	Զվարթնոց 2 օդանավակայան	ՀՀ բնապահպանության նախարարություն	49 642.1	7600.0	8 000.0	8 000.0
65.	«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ	քաղ. Երևան, Նորք, Հովսեփյան 95	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	23 979.0	30 500.0	31 000.0	31 000.0
66.	«Հատուկ կապ» ՓԲԸ	քաղ. Երևան, Թումանյան 23	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	298.0	375.0	400.0	400.0
67.	«Վարչատնտեսական» ՓԲԸ	քաղ. Երևան, Նալբանդյան 28	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	2 621.345	850.0	1 000.0	1000.0
68.	«Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ	քաղ. Երևան, Նալբանդյան 28, քաղ. Երևան, Միեր Ակրտչյան 5բ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	0	0	0	0
69.	«Հայփոստ» ՓԲԸ	քաղ. Երևան, Սարյան 22	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	0	0	0	0
70.	«Արմկոսմոս» ՓԲԸ	քաղ. Երևան, Նալբանդյան 28	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	0	0	0	0
71.	«Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» ՓԲԸ	Կոտայքի մարզ, քաղ. Ծաղկաձոր	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	0	2 010.0	2 010.00	2 010.00
72.	«Դավիթ Համբարձումյանի անվան ջրացատկի հերթափոխի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՓԲԸ	քաղ. Երևան, Մովսես Խորենացու 1-ին նրբ., թիվ 1	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	0	1 100.0	1 300.0	1 300.0
73.	«Հավաքական թիմերի մարզական կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի, 4	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	0	1 111.2	1 111.2	1 111.2
74.	«Նորք» տեղեկատվալեր-լուծական կենտրոն» ՓԲԸ	քաղ. Երևան, Կ.Ուլունցու 68	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	8 872.7	3 500.0	3 500.0	3 500.0

1	2	3	4	5	6	7	8
